<<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾՈՎԱՍԱՐԻ ԲԱԽՏԻԲԵԿ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>ՊՈԱԿ

Էլ. փոստ tsovasar@schools.am ел. Почта tsovasar@schools.am

Գյուղ Ծովասար N 354

07.03.2023թ

ՀՀԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Կ.ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Կ.Սարգսյան

Տեղեկացնում եմ Ձեզ, որ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովասարի Բախտիբեկ Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում առկա է <<Քիմիա>> առարկայից 13 դասաժամ, <<Կենսաբանություն>> առարկայից 6 դասաժամ թափուր աշխատատեղ: Ղեկավարվելով ՀՀ ԿԳ նախարարի 2013թ. ապրիլի 15-ի N-396-Ն հրամանով հաստատված <<Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգի >> 7-րդ կետի պահանջներով՝ տեղեկացնում եմ, որ << ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովասարի Բախտիբեկ Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ում <<Քիմիա> >և<<Կենսաբանություն>> առարկաների ուսուցչի թափուր տեղն զբաղեցնելու համար հայտարավել է մրցույթ:

Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի մարտի 24-ին՝ ժամը 14:00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովասարի Բ.Մուրադյանի անվան միջնակարգ դպրոցում:

Կից ներկայացնում եմ հայտարարության տեքստը:

Առդիր 1 էջ:

Հարգանքներով.

Տնօրեն՝ Digitally signed by MOVSISYAN Անժելա Վարդանյան

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովասարի Բ. Մուրադյանիանվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում <<Քիմիա>> առարկայից 13 դասաժամ, <<Կենսաբանություն>> առարկայից 6 / թափուր աշխատատեղի համար/:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստդասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարությանկողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին կարող է մասնակցել հաստատության տվյալ թափուր տեղին ներկայացվող՝ <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը:

Մրցույթին մասնակցողը ներկայացնում է՝

1. Դիմում (ձև 1),
2. Բարձրագույն կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),
3. Անձնագիր,
4. Աշխատանքային գրքույկ,
5. Ինքնակենսագրություն (Ձև 4),
6. Մեկ լուսանկար 3X4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8. Հայաստանի Հանրապետությունում արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ,
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)
10. Որակավորման տարակարգ (առկայության դեպքում):

Փաստաղթղերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ 2023 թվականի մարտի 7-ից մինչև 2023 թվականի մարտի 21-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 17:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:
Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի մարտի 24-ին՝ ժամը 14:00-ին Ծովասարի Բ.Մուրադյանի անվան միջնակարգ դպրոցում:

Հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Ծովասար, 1-ին փողոց, 13 շենք:
Տեղեկությունների համար զանգահարել 094094029 հեռախոսահամարով: